ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիս, 2019 թվականի № 25-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 52-Լ ՈՐՈՇՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱՍՏՈՒԴԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՐՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 52-Լ, որոշման № 1 և № 2 հավելվածները փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 և № 2 հավելվածների:

2. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված ռադիոհաղորդումների և դրանց հեռարձակման իրավունքների ձեռքբերման նախահաշվի փոփոխությունը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածում ներկայացված նախահաշվի:

3. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված տեսաստուդիայի համար նախատեսված հիմնական միջոցների ձեռքբերման նախահաշիվը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:

4. Հիմք ընդունելով սույն որոշման 1-3-րդ կետերի իրականացումից բխող, ինչպես նաև Ընկերության ընթացիկ գործունեության հետ կապված այլ դրամական մուտքերն ու ելքերը և եկամուտներն ու ծախսերը՝ հաստատել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշմամբ հաստատված Ընկերության եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 5 հավելվածի, եկամուտների և ծախսերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 6 և դրամական հոսքերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 7 հավելվածի:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

6. Սույն որոշման 1-ին կետով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել 2019 թվականի հունիսի 16-ից, բայց ոչ շուտ, քան սույն որոշման ընդունման մասին համապատասխան անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

11 հունիս, 2019 թվականի

ք. Երևան